1864. 20 Ապրիլի քառ. հին տոմարի:

Թիւ 8.

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ:

1864. 2 Մայիսի քառ. նոր տոմ.

Registered at the General Post-Office for transmission abroad.

# ԵՐԿՐԱԳՈՒՆՏ

## ԼՐԱԳԻՐ ՄԱՆՉԵՍՏԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ, ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ:

Հրատարակութեան, մատակարարութեան եւ բաժանորդագրութեան կեդրոնն է ի Մանչեսթր:

—Նամակք, յօդուածք, գիրք եւ դրամներ (ազատ ի ծախուց փօստայի) ուղղելի յանուն Անդրէաս Կարապետ Վ. Շահնազարեանց, հետեւեալ այսպէս·

M. le Chevalier K. Vardapete Shahnazariantz, 151, Rumford Street, Manchester, (Angleterre.)

Տարեկան գինն հանդերձ ծախուց փօստայի, ամբողջ Անգլիոյ եւ Ֆրանսայի ընդհանուր եւ ընկերութ, է 25 ֆ. ֆ.

—Այս թերթերէն ըստ փօստայի ծախուց տարբեր գինով է:

—Վիեննայ . . . . . . . . . 13 „

—Եգիպտոս . . . . . . . . . 7 „

—Մէկ թերթի գինն ի Մանչեսթր է . . . . . 5

դահեկան . . . . . . . . . 7

—Բաժանորդք կրնան ամեն ամսոյ մէջէն եւ սկսիլ:

Սորագրութեան տեղիքն են Կոստանդնուպոլիս Սարգիս Աղայ Մ. Հիսարեանի սենեակն ի Ղալաթա. —Իզմիր Մարկոսեան Յակոբ Աղայի սենեակն. —Հալէպ Յովհաննէս Աղայ Պիւրքճեանօղլի սենեակն. —Սուրբ Երուսաղէմ Արժանապատիւ Եսայի Վարդապետի սենեակն. —Աղեքսանդրիա (Եգիպտոս) Տէր Գասպարեան Ղազարոս Աղայի սենեակն. —Կալկաթա Արրակրոն Աւագ քահանայ Տէր Յովհաննէս Խաչիկեանի և Ասպետի սենեակն. —Բաթավիա Պ. Մանուկ Որդանանեանի սենեակն. —Լոնդոն Աղայ Մաքսուդօղլի սենեակն. —Փարիս Աղա Պօղոս Աբրահամեանի սենեակն: Առ այժմ ուղղողներն կրնան վերոգրեալ սենեկաց մէկէն առնուլ մինչև որ յատուկ գործակալներ հաստատեմք բազմահաց և ընթերցասէր քաղաքներ:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Տեսութիւն Քաղաքականութեան.—Մեծն Բրիտանիա.—Ֆրանսա.—Իտալիա.—Դանիմարքեան խնդրանութիւններ.—Բուսաբանութիւն.—Թիւրքիոյ եւ այլ Տէրութեանց Հայերու վիճակը.—Հնդկաստան.—Բանասիրական. Խառն լուրեր.—Ջրաբաշխութիւն.—Առեւտրական:

### ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ձնայելով Եւրոպայի մեծամեծ արքունեաց ունեցած հոյակապ և մեծահանճար սպաշտօնէից. չնայելով Եւրոպայի ունեցած կիրթ և բազմաթիւ ծովային և ցամաքային զօրութեանց, կարծես թէ, Մեծին Բրիտանիոյ և Ֆրանսայի արքունեաց մէջ եղած պաղութիւնն բոլոր Եւրոպա տատանման մատներէ եւ ամեն բան ջլախտոր ըրեր:

Երկու ամիսէ աւելի է որ Դանիմարքի և Գերմանիոյ մէջ անհաւասար և ոչխարհաւեր պատերազմ բացուեր է,-պատերազմ անտեղի, անիրաւ և ոչ իսկ արդարանալի,-պատերազմ, զոր 80 միլիոն Գերմանացիք մէկ և կէս միլիոն Դանիերու դէմ կմղեն, և տասն Պրուսիացիք և Աւստրիացիք քաջութիւն կսեպեն, պատիւ կհամարին, մէկ Դանի դէմ մղել: Մեր համոզմունքն, կխոստովանիմք, հրապարակաւ, որ ակարի կողմն է. և մեր միզ կընծայեմք ըսել թէ Դանիերու, որք այսպիսի անձնուրաց դիւցազնութեամբ իրենց երկիրն, ոտ առ ոտ, իրենց արեամբն ոռոգելով կպաշտպանեն, ամեն մէկ պարտութիւնն մէյ մէկ յաղթութիւն է, թէ, ընդհակառակն, Պրուսիացւոց ամեն մէկ յաղթութիւնն մէյ մէկ պարտութիւն է: Ո՞չ ապարէն Պրուսիացիք իրենին մեր առաջադրութիւնն կվաւերացնեն 10 պրուսիացի զինուոր մէկ Դանի դէմ ճակատ հանելով և 10 պրուսիացի թնդանօթ մէկ Դանի թնդանօթի առջև շարելով. ապա թէ ոչ՝ ե՞րբ տեսնուեցաւ, ե՞րբ լսուեցաւ որ 2 Պրուսիացի մէկ Դանի յաղթեցին: Այսպէս ուրեմն, Պրուսիացիք և Աւստրիացիք Լեհաց, Իտալացւոց, Դալմատացւոց, Խրուաթաց, Սլավաց, Հունգարաց, Բոհեմաց և այլ ազգաց նուիրական իրաւունքն ոտնակոխ ընելով Դանիմարք կարշաւեն քանի մի կորուսած Գերմանացւոց իրաւունքն պաշտպանել ճչալով, որպէս թէ մարդոց գլուխներն դդմենեաց պարունակ ըլլային, և այսպիսի արքայախօս խաբէութեանց հաւատալու պատրաստ:

Սակայն ի՞նչ կընէ ծերունի Ալբիոնն: Անգլիոյ զօրութեան, խոհեմութեան և մեծութեան փառքըն Փիտի, Ջաւամի, Քաննինգի հանճարովն այսչափ բարձրացնելէն յետոյ, արժա՞ն էր, ներելի՞ էր, այսպիսի նուաստութեան եւ անշքութեան իջեցնել: Մի՞թէ Յոհան Բուլ չուզեր այլ ևս Անգլիա առաջին ազգաց կարգին մէջ պահել. մի՞թէ լորդ Փալմերստոն, քանի մի միլիոն աւելի ծախք չընելու համար, կուզէ Գերմանիոյ խաղալիկ ըլլալ. և մինչև ե՞րբ:

Մեր լսերէինք և կհաւատայինք թէ որ ինչ ի պաշտօնէ ծանուցուած է՝ վաւերական է. առջի անգամն է սակայն որ լորդ Փալմերստոնի պաշտօնական ծանուցման անհիմն ըլլալն կիմանամք: Այնիւ լորդն ի պաշտօնէ ծանոյց Խորհրդարանին թէ 20ին խորհրդակցութիւնն բացուելու է. և յաւելցուց թէ գերմանական Գլեատն երեսփոխան խրկէ, չխրկէ՝ խորհրդակցութիւնն պիտի բացուի. սակայն 20ն անցաւ, և հազիւ հազ 25ին իր առջի նիստն տեղի ունեցաւ:

Այլ և այլ զրոյցներ կպատմին թէ խորհրդակցութիւնն պիտի վիժէ, և Նապոլէոնեան ժողովն յաղթանակէ, իբրև եւրոպական խաղաղութեան միակ ճար: Տեսցուք թէ ապագան մեզ այլ ինչ յեղակարծ պահերէ:

—Նուերն երկաթի թանձր տախտակով զրահաւորելէն յետոյ, այժմ սկսան բերդերն ալ զրահաւորել նոյնպէս երկաթի թանձր տախտակով: Այս փորձիս առաջին օրինակն տուաւ Ռուսիա իր Կրոնստադն անդծելի ընելու համար, երկրորդն եղաւ Բելգիա իր Անվերն անառիկ ընելու համար: Շեֆֆիլդի Պ. Պ. Բրաունի և Ընկերութեան ձուլարանն արտաքոյ կարգի ճարտարութեամբ այս նոր տախտակս հանուէ. վեց ոտն երկաթ մէկէն քրան կնետեն և տաքութիւնն վերջին աստիճան հասցնելով՝ կհոսեցունեն զանիկա և

